

ԲԱՃԱՆՈՐԿԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՍ

ՂՐԸ ՈՂՋ

Գանձիւի համար	սարեկան	50
»	վեցամսեայ	30
Երգակայից	սարեկան	60
»	վեցամսեայ	35

ԱՐՏԱՍՏՄԱՆԻ ՉԱՄԱՐ		
Տարեկան	...	Տրանգ 18
Վեցամսեայ	...	» 10

ՌՈՒՍՈՅԵ ԵՒ ԿՈՎԿԱՍԻ ՉԱՄԱՐ		
Տարեկան	...	րուբլի 7
Վեցամսեայ	...	» 4

ԲԱՃԱՆՈՐԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՒԿ Է ԵՒ ԲՂԹՈՍԱՐԻ ԾԱՆՔԸ ԹԵՐԻՆ ԿԱՐՅԱԿԻԱՆ ԿԻՄԱՅ Է

ՆՈՐՈՐ

Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՄԻՐԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵԲՇԱՐԹԻ ԵՒ ՇՄԱԹ ՕՐԵՐԸ

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ «ՆՈՐ ՕՐ»

ՆԱՄԱԿ ԿԱՐ ՈՒՆԷ ԲՂԹՈՍԱՐԻՈՒՆ ԳԵՏՔ Է ՈՒՂՂԱՆ ԱՌ Վարչութիւն ՆՈՐ ՕՐ Լրագրի ԳԱՀԻՐԷ

Direction du journal NOR-OR Caire

Չեռագիրներն եւ չեն դարձուիր, ԱՐՏՈՒՆԱՏԵՐ Ժ. ՄԻՒՆԻԷ

ԶՈՐԵԲՇԱՐԹԻ ՆՈՅԵՄ. 29/12 ԴԵԿՏ.

ՔՍԱՆ ՓԱՐԱՅ ՈՂՋ

Ա. ՏԱՐԻ ԹԻԻ 54

ՊԱՇՏՈՒՄԱԿԱՆ ՅԱՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՆԵՐԿԱՑ ՏԱՐԻՈՑՍ ՕԳՈՍՏՈՍԻ 11-ԷՆ ՄԿՍԵԱՎ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿՆԻՔՆ ՈՒ ՔԱՐՏՈՒՂԱՐ-ՆԵՐԿԱՑՈՒՑՈՒՑԻ Զ ՏԻԱՐ ՄՄԲԱՏ ՓԱՓԱԶԵԱՆԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԶԸ ԿՐՈՂ «ՆՈՐ ՕՐ»-Ի ԸՆԿԱՆԱԳԻՐՆԵՐՆ ԱՆՎԱԿԵՐ ԿԸ ՆԿԱՏՈՒԹԻՒՆ:

ԻՆՉՈՒ ԿԱՍՈՒՍՆԱՆԱՆ

Առ Օրիորդ Մ. Ս.

— Հայերը ինչո՞ւ կամուսնանան, հարցուցրէ ինձի երկու գաւաթ թէ՛ ի միջև և ամուսնութեան վրայ դարձած խօսակցութեան մը միջոցին:

— Տեսնելու համար թէ երկու հոգի մէկ բարձի վրայ ձերանալով որքան կաղտոտեն . . . բարձին երեսը, պատասխանեցի ձեզի, եթէ չեմ սխալիր:

Եւ պիտի շարունակէի խօսակցութիւնս, բնականաբար, եթէ տիկին ձեր մայրը չի հազար և ժամացոյցը չըտեր թէ անպատշաճ պիտի ըլլար երկարել այցելութիւնս որու նպատակը ապահովակէս բարբերու ուսումնասիրութիւն մը ընել չէր նոյն իսկ ձեզի պէս նազելի աղջկան մը հետ:

— Գոնէ գրեցէք, հրամայեցիք ինձի ձեր ձեռքը սեղմած պահուս:

Արդէն պատրաստ նիւթ մը գտած ըլլալու գոհունակութիւնս ձեր մէկ փափաքը կարեւոր լրացնելու հաճոյքին խառնուած, կը մղին զիս ներկայ յօդուածս գրելու և այս ողորմելի տողերը ձօնելու ձեզի պէս գեղանի և միևնոյն ատեն խելանի օրիորդի մը:

Արդ, կուզէք գիտնալ թէ ինչու հայերը կամուսնանան:

Ամէն բանէ առաջ, ոտքի վրայ մի կենաց, խնդրեմ, պատասխանս կրնայ երկարիլ ուստի հաճեցէ՛ք ձեռք թաղկեցարոյ:

Աւասիկ յանձնարարութիւն մը ձեզի գոր կատարելու համար ոչ ճերմակ շրջազգեստի պէտք ունիք և ոչ ալ նարնջնի ծաղիկներու . . . Թէև առանց ասոնց ալ կարելի է համակերպիլ աստուածային պատուէրին:

Հայերը կը կարգուին, օրիորդ, ինչպէս օւխտի կերթան, ինչպէս հազուստ կը գնեն, ինչպէս կը զինովան, ինչպէս կը հիւանդանան և ինչպէս կը մեռնին: Առողջապահութեան, հանգստութեան, շահու, սովորութեան խնդիր մըն է այդ իրենց համար որուն մէջ ոչ սիրաբանութիւն և ոչ հոգին:

Ուրիշ ազգերու մէջ երիտասարդ մը նախ աղջիկ մը կը սիրէ և ետքէն հետը կամուսնանայ: Մեր մէջ նախ կը կարգուին և յետոյ կուսակցին որ պատկեր ունի յետէ, ինչ որ շատ անգամ կը մոռնայ բերելու:

Հայերու մէջ սիրոյ համար ամուսնացողները այնքան թիւ են որքան սիրոյ համար մեռնողները:

Կ'ըզամ թէ ձեզի պէս Պարթևի, Բրեյտի և Մարկիթի սկզբունքներով մեծցող և անոնց հատորներուն վրայ աչքի լոյս թափող էսկիներ չպիտի հատուտ ըսածներուս և պիտի կարծեն որ պարզ ֆանթազի մըն է որ կը գրեմ առանկ ընկերական մեծ խնդիր մը վրայ ինչպէս է ամուսնութիւնը:

Եւ սակայն ճշմարտութիւն մը անհնար ըլլալու համար՝ ճշմարտութիւն մը ըլլալ է չի դարձիր:

Մէկ խօսքով, օրիորդ, ձեր ենթադրած կամ երևակայած կերպով չէ որ ամուսնութիւնները կը կատարուին մեր մէջ, ընդհակառակը, կը հատուտ արգեօք, եթէ ըսեմ թէ՛ ձեր և իմ գիտցած սերը հայերուն մեծագոյն մասին համար անձանօթ զգացում մըն է որ ոչ զպատճ ունին և ոչ ալ կրնան զգալ:

Ասոնց համար սեր է կըր ամուսին մը իր կնիկան փոխանակ երկու շրջազգեստ շինելու և կամ երկու գլխարկ անելու մեծ շրջազգեստ կը շինէ տարին և շորս գլխարկ: Բարիկէն sortie de bal մը բերել տուող մարդու մը համար՝

— Կնիկանը վրայ կը խնդրենայ կոր կըսէ զորանչը և

— Ալլըման էրիկ մը: Է կըսեն մնացեալ ազգականները:

Եւ սիրոյ աստուածը վերէն կը ծիծաղի: Կը հասկնամ թէ ուրիշ ազգերու մէջ ալ ասանց սիրոյ ամուսնութիւններ կը կատարուին, բայց գոնէ երեւոյթները փրկելու եղանակ մը ունին որ ինքնին շատ բան ըսել է արդէն:

Տասնութին քսան երկու տարեկան աղջիկներ և քսան հինգէն երեսուն տարու մանչիւր զգիտնան թէ ինչ է սերը, չզգան անոր ամբողջ անուշութիւնը և կարգուին որովհետև աղջկայի պէս ասանկ կուզէ կոր, ինչ մեղք, ինչ յանձնար: Եւ ըսել թէ ամենքն ալ այսպէս են, խեղճերը:

— Ե՛ս՝ Գիրգոր, ասնկ քեզի ըրնալի հարս մը գտնամ նէ չէ՛ չես ըսեր ե՛ս:

— Տեսու, տահա վախիթը չէ:

— Ճանրմ, անանկ ալ էրկու թիւրի կերակուր կեփի կոր անանկ ալ, շորսին կեքածը հինգ հոգի ալ կուտէ:

Եւ տղան կը կարգեն որովհետև կէս օխայ միսը հինգ հոգի ալ կը բաւէ եղբր:

Տեսաք, օրիորդ, ինչ սկզբունքի վրայ հիմնուած է ամուսնութիւնը մեր մէջ:

Ինչ կուզեն թող ըսեն, ես կը պնդեմ թէ ուրիշ զարգացեալ ազգերու մէջ ամուսնութիւնը սրտի խնդիր է, իսկ հայերուն համար . . . ստամոքսի:

Տարբեր տեսակներով ամուսնացողներ ալ կան, ամենէն հետաքրքրականները ասոնք են թերևս:

— Պարոն Ալիբեյ, իմացայ որ նշոնուեր ես, իրաւ է:

— Եյ, Աստուած ուզէ՛ն, ասանկ պիտի մը կայ, ինչպէս ըրիք թէ, անպարս չի կարողուր կոր, ես ալ չի կարողուր նէ Մալիք շեյխին անուշը պարսիկ չի պիտի ըլլայ:

Եկուր մի ինչպար, եթէ կրնաս:

Միամիտները: Ասոնք կը կարծեն թէ աշխարհը կը կործանի եթէ կիրակոտեան մը, Մարտիրոսեան մը, Բուշահեան մը և կամ Կարապետեան մը պակաս ըլլայ:

Այսպէս մտածելու եղանակ մը կը հասկընամ որ ներքի ըլլար Ապրիլի մը, կամ Տասնեանի մը, բայց շարունակել ուզել շաւիղը որ և է կիրակոտեանի մը քիչ մը տափակ, գոհնիկ չէ՛:

Ուրիշներ ալ կան որ Հիմէի առաջատը կը մտնան երկրօրէն ի մարմին մի ի խնդիր փորձական կերպով լուծելու համար:

(Շարունակելի) Թ. ԱՎԻՄԱՐ

ՏԵՂԱՊԱՆՍ ՍԵ ԻՆՉՊԷՍ ԿԸ ՓԱՆՏՆԵՆ

Թաղականներու անհաճոյ դարձած տեղապահ մ'իր թեմէն հեռացնելու համար ի գործ դրուած մեքենայութիւններու, էնթրիկներու մասին շատ մը բաներ տեսած ու լսած ենք արդէն: Կերեի թէ, լուսածններն ու զիտցուածները անբաւական համարուելով նոր և աւելի գիւրդին միջոց մը հնարել ուզուած է, իր տեսակին մէջ գրեթէ եղական, գայթակղալի, Տ. Գատուլիաճեանի թատերական նիւթ մը հայթայթելու ընտելութիւնը ունեցող:

Ու ցաւալին հոն է մանաւանդ, որ զէպը՝ զոր նկարագրուած կը զըտնենք «Արեւիկ» մէջ, Ալլամ Անտոնեանի սիրուն ու նրբամիտ ոճով, կը պատահի Հայաստանի հեռաւոր գաւառի մը մէջ, Հայ գաւառացի կրններու պարկեշտութեան համարաբար պահ մը խախտել սպառնալով:

* *

— Եւ սակայն, կ'ըսէ յարգելի յօդուածագիրը, ջոջերը հաշտ աչքով չեն նայիր այս ամէնուն. անոնցմէ մէկը մանաւանդ, որ մեծ ազգեցութիւն մը կը բանեցնէ միւսներուն վրայ, կը մտածէ թէ Տեղապահին ներկայութիւնը լաւ ապագայ չի խոստանար իր աւելի կամ'նուազ մեղապարտ գործառնութեանց:

Վտանգը մեծ է. վախ կայ որ կորուսին իր բոլոր շահու ազգիւրները: Ու ժողովի կանչելով միւս ջոջերը, կայութիւնը կը պարզէ անոնց. կը ցուցնէ թէ ինչպէ՛ս Տեղապահը միշտ թումը մը պիտի ըլլայ իրենց դէմ, և պիտի արգիլէ կամ արգիլել տայ իրենց ապօրինաւոր արարքները: Եւ որովհետև իր շահը միւսներուն ալ շահը ըսել էր, ամէնքն ալ կը համաձայնին իրեն հետ, ու կ'որոշին Տեղապահը քշել թեմէն դուրս:

Իսկոյն լոյսակ վարժապետ մը կը գտնեն, Տեղապահին դէմ ենթադրական բողոքագիր մը մրտաւ կու տան անոր, ու քանի մը մէծիտի հետ մէկտեղ զրուածքը կը զրկեն մեր թերթերէն մէկուն:

Դրամը շատ բան ընել կու տայ: Լրագիրը առանց ո՛ւ և է քննութեան կը հրատարակէ բողոքագիրը, մէծիտներու թիւին համեմատութեամբ զարգարանք մը տալով անոր:

Ամիս մը ետքը հերքում մը կը հասնի, յետոյ նոր բողոքագիր մը և դրամ, յետոյ դարձեալ հերքում, և այդպէսով կուզայ ամբողջ խնդիր մը որ տակաւ խոշոր համեմատութիւններ կը ստանայ:

Բայց հակառակ այդ լրագրական ձեռնածութեանց, Տեղապահը ետ չի կենար պայքարէն. տեղին վրայ կը կուտի ջոջերուն հետ, մէկի դէմ տասը կու տայ, և միւս կողմէ ալ կը շարունակէ առաջ տանիլ իր օգտակար գործունէութիւնը, մինչև հակառակորդներուն յուսահատութիւն առթելու աստիճան:

* *

Խնդիրը այդ վիճակին մէջ գտնուած պահուն, աստուան մէկը խորտակ կին մը կը ներկայանայ Առաջնորդարան, գրեթէ մուծին:

Տեղապահը, հազիւ անկողնէն ելած կը հարցնէ թէ ինչո՛ւ եկած է:

— Հոգուդ զուրպան Հայր Սուրբ, կը պատասխանէ կինը՝ եր սեռակի աշուրներուն նայուածքը վարդապետին աչքերուն դամած:

— Բայց ի՞նչ կ'ուզես:

— Քիզի, Հայր Սուրբ, քիզի, սիրտս կ'երի քու սալտայէն: Առանց քիզի օր արեւ չունիմ:

Կ'երեւակայէք անշուշտ թէ խեղճ Տեղապահը ի՞նչ քիթ բերան կ'ընէ այս անսպասելի յայտարարութեան հանդէպ:

Կինը, — ամուսնացած կին մը ինքնին և զազական ջոկերէն մէկուն, — ծունցի կու գոյ անոր առջև, կուլայ, կը պարտաւոր, կրկնելով:

— Հայր Սուրբ, առանց քիզի օր արեւ չունիմ . . .

Վերջապէս Տեղապահը կը յաջողի կինը հանդարտեցնել, և իր ըրածին բովանդակ անվայելութիւնը պարզելէ ետքը, խրատներով ճամբու կը գնէ դայն:

Բայց հազիւ Առաջնորդարանին գուռնէն գուրս ելած, կինը կը շրջապատուի բազմաթիւ մարդոցմէ, — մեծ մասամբ ջոկերէ, — և կատարեալ գոռում գոչում մը կը սկսի:

Տեղապահը իրար անցած, պատահան կը յատքէ, ու քար կտրած ունկընդիր կ'ըլլայ հետեւեալ խոսակցութեան. —

— Թո՛ւ, կը գոռայ ջոկերէն մէկը կնոջ թեկն բռնած, թո՛ւ երեսիդ. ո՛ր էիր այս գիշեր:

— Ա՛ֆ քէք, կը մրմնջէ, ա՛ֆ քէք:

— Քիզի համար ներողութիւն չը կայ. ո՛ր էիր այս գիշեր:

— Առաջնորդարանը, կը պատասխանէ կինը կիզմ թոթովումով մը. Հայր Սուրբին քովը:

— Հայր Սուրբին քովը . . ., կը գոռայ ջոկը՝ կատարութիւն ձեռնարկով:

Ու խմբուած մարդոց դառնալով կ'աւելցնէ.

— Լսեցի՞ք, Հայր Սուրբին քովը է եղեր այս գիշեր, Հայր Սուրբին քովը . . .

— Վա՛յ անաճթ կ'ըսէ մէկը:

— Վա՛յ անպիտան, կ'աւելցնէ ուրիշ մը:

— Սրիկան տեսա՞ր, կը պոռայ երրորդ մը:

Վերջապէս ամէն մարդ անական մը կը գտնէ Տեղապահին հասցէին:

Խոսքը տակաւ կը ստուգարանայ, և շատ շանցած ամէնքն ալ Առաջնորդարան կը խուփեն, փողոցին մէջ թողնելով կինը՝ որ իր դերը աւարտած ըլլալով իսկոյն կ'անյայտանայ:

Առաջնորդարանին մէջ նոր տեսարան. Տեղապահը ի զուր կը ջանայ մարդիկը համոզել թէ կինը այն ատուռն, զրեթէ ասոր վայրկեան առաջ միայն իրեն եկած էր, և թէ ինք գիշերը բնաւ չէ տեսած դայն:

Բայց որո՛ւ կ'ըսէ: Լուսանքները, անականները նորէն տեղալ կը սկսին և կը շատնան այնչափ, որչափ Տեղապահը կ'աշխատի ինքզինքը արդարացնել:

Յաջորդ օրը լուրը կը տարածուի քաղքին մէջ, ու նոյն իրիկունն իսկ Տեղապահը կը պարտաւորուի բեռները կապել:

* * *

Կարծեմ հարկ չկայ աւելցնելու թէ ջոկերուն մէկ խաղն էր այդ կնոջ խնդիրը, — գերադոյն միջոցը՝ որուն հանդէպ Տեղապահը զինաթափ պիտի ըլլար: Ամեն ստորնութիւն յանձն առած էին. իրենցմէ մէկը իր կինը ժողովուրդին դատապարտութեան նըշառակ ընելու չէր վարանած, պարզապէս փրկելու համար այն ապօրինաւոր շահերը՝ որոնց դէմ Տեղապահը արդեք մը կը հանէր միշտ: Ու կինը հլու ծառայ իր ամուսնին, ընդունած էր այդ անթափ դերը, գացած էր Առաջնորդարան ատուռն միայն, և այնպէս հաւատացուցած էր թէ ամբողջ գիշերը հոն անցուցած է:

Ու ժողովուրդն ալ, որուն մէկ մասը ջոկերը առաջնորդարանին գուռը տարած էին իրր վկայ, միաբերան դատապարտած էր Տեղապահը, ու չը պիտի հատար անոր անմեղութեան, բանի որ երեկոթները անոր դէմ էին և միւս կողմէ ալ կինը ամէն բան կը խոստովանէր:

Ահա այսպէս է որ Տեղապահ մը փախցնեն . . .

ՔՐՈ ԱՐՄԷՆԻԱ

Առաջուց ծանուցեր էինք թէ՛ Քրօ Արմենիա (հայկական հարցը) վերնադրով Ֆրանսիայէն կիսամսեայ հանդէս մը պիտի հրատարակուի Բարիդի մէջ, որուն պիտի աշխատակցին Ֆրանսայի արդէնմեծ գրագէտներէն շատերը, և որուն նպատակը պիտի ըլլայ պարզապէս Հայկական խնդիրը յուզել ըստը քաղաքակրթեալ ազգաց մէջ:

Քրօ Արմենիա ի առաջին թիւը հըրատարակուած է, ուր Բիէս կիցեալ հանդէսին խմբագրապետը՝ Սուլթանի պատասխանատուութեան մասին կը զրէ՛սայցայէս:

« Սուլթանը, կ'ըսէ յարգելի յօդուածագիրը, անձնապէս պատասխանատու է հայկական կոտորածին, ու հայոց քաշած առաջանքին: « Չուր գիշին կը հոտի » կ'ըսէ թրքական առածը, ուրեմն Սուլթանը և իրեն ստորագառ ոճրագործներն են այս ամենուն պատճառը, և, հետեւաբար, ասոնց առաջն անկու համար պէտք է շարժախել այդ նեխած գլուխները կամ գուրս նետել, որպէս զի չ'կրնան վնասել, ու երոպական կառավարութիւնները ապահովաբար, եթէ ուզեն, կրնան ընել ասիկա, ինչ որ Սուլթանը, ինք շատ լաւ գիտէ: Անցեալ տարի Պ. Պ. Խուպին կոյնի, Շառլը Մալաթոյի և ինձի գլմ գատ բանալ ուզեց զինք « Մեծ Մարդասպան, Մեծ Արիւնկակ, կարմիր Սուլթան, կարմիր Գազան » կոչելու համար: Բայց երբ տեսա որ դատաւարութեան միջոցին ասոնք ամենը պիտի ապացուցուին, կամացուկ մը վազ անցաւ այդ սեփսփայէն, որով խոստովանեցաւ թէ ինք արժանի էր այդ մեղքներուն »:

Կարծէ Քրօ Արմենիան քաջալերել:

և պէտք է որ քաջալերենք: Հանդէսը իր ամբողջ էութեամբ Հայկական հարցին նուիրած է և պիտի նուիրէ ինքզինքը: Ֆրանսագէտ հայերը մանաւանդ պէտք չէ երբէք անտարբեր մնան սոյն հանդէսի նկատմամբ:

ԼՈՐՏ ՌՈՂՊԵՐԻԻ ՄԷԿ ՃԱՌԸ

Լորտ Ռողպերի՝ վերջնա Սնդղից մէջ ճառ մը արտասանեց նիւթ ընտրելով « Անգլիական Տէրութեան ապագան », բացատրեց այն պատճառները որուն համար Անգլիա կրցած է աշխարհի մէջ գերադոյն տեղը բռնել: Պատճառը ըստ Լորտ Ռողպերի, այն է որ Անգլիա միշտ լաւ ընտրութիւն ըրած է իր պաշտօնեաներու բայց բնական է որ այդ կարող պաշտօնեաները յաւիտեանս չը պիտի ապրին, վերջապէս ժամանակը փոխուած և քաղաքական կրճիւնները օր ըստ օրէ աւելցած ըլլալուն՝ ևս աւելի Անգլիա փոյթ ասնելու է որ կարող մարդիկ պատրաստէ կառավարութեան գործերը վարելու:

Ի՞նչ է արդ նպատակը առաջին միջոցը — համալսարանը:

Թայց պէտք է որ համալսարանին մէջ մեր երիտասարդութեան տրուած կրթութիւնը ժամանակին պահանջման համապատասխան ըլլայ: մինչև իսկ պիտի փափաքէի որ իւրաքանչիւր համալսարանի մէջ վաճառականական ուսմանց դասարաններ աւելցուին ուր աշակերտները իրենց թաղմ ատենէն՝ դործնական մարդիկներ ըլլայու, կարենան պատրաստուիլ:

Բաց աստի աւելի յաջողելու համար, պէտք է մեր համալսարաններու մէջ Յունարէն և Լատինարէն լեզուներու ուսուցումը ջնջել և ասոր տեղ նոր և արդի լեզուները սովորեցնել:

Գիտէ՞ք թէ որքան աղէտ է մեր ազգին ապագային համար՝ մեր սերունդին արդի լեզուներէն և ոչ մէկու հմուտ ըլլալը:

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Երկու շաբթի գիշեր, շարձ Ապոսիլ Աղիդի արտաբական թատրոնին մէջ տեղի ունեցաւ ներկայացում մը, արարելէն լեզուու, նիւթը ըլլալով եզրիպատական ուստանին սեփական ցոփակեցութիւնը, որուն զրեթէ միշտ բնական արդիւնքը եղած է — և պէտք է այնպէս ըլլայ — սնանկութիւն, բարոյական դահալիժում, թշուառութիւն:

Խուռն բազմութեան մէջ կը տեսնուէին նաև, թէպէտ փոքրաթիւ, երկու սեռէն Հայեր, մասնաւորապէս հրախրուած: Ներկայացման սկիզբէն մինչև վերջը, հանրածանօթ Շէյխ Սալամա երգիչ-գերասանը, իր հոշակաւոր հզօր ձայնով, հեշտացուց ունկնդիրները, ըստ սովորականին սուղած, զգրիւած:

Միջնարարի մը պահուն՝ բնմ ելաւ Իսմայիլ Պէյ Ասիմ փաստաբանը, ու, հակառակ իր ուարիքին, արդու՝ բոցեռանդն ճառախօսութեամբ մը բացատրեց թէ ի՞նչ բարեգործական նըպատակի յատկացուած էր ներկայացման հատկութիւնը, թէ արևմտյաներու կէց փոխ առած են իրենց այսօրուան քաղաքակրթութիւնը, և թէ ինչո՛ւ:

այսօր, Սրեկեքը այնքան յետագէմ է բազդատումը եւրոպային, որ միշտ օգտուած է այդ փոխար յետագիւնութեան: Երկար պիտի ըլլար զեւեղել այստեղ՝ իր ամբողջութեամբ՝ այդ բանախօսութիւնը, սրուն ամէն մէկ նախադասութեան, մին միւսէն աւելի շահեկան և հրաբորբ, ունկնդիրները որոտագին ծափահարութիւններով պատասխանեցին: Ու երբ հասկցնել ուզեց թէ, մարդու մը նուիրական դասանալներն պէտք է ըլլան « Ազատութիւն, հասարակութիւն, եղբայրսիրութիւն », բանի մը վարկեաններ թատերասրահը դըզըրդաց « Կեցցէ՛ ներու գու ու գու չուսէն »:

Սյապէս, երբ իսկապէս յետագէմ ու քնասէր ճանցուած եզրիպատցին՝ խանդալտու ծափահարութիւններով կողջանէ մարդկային երրորդութեան պաշտի տխրահրահանջներ, մենք, Հայերս, զմեզ « Սփոյ ֆուստուս » հրաշակող ժողովուրդ, մեր ահա զարգացումը այնքան տխրօրէն զէնք ընտրած ենք մեզի, երբ խնդիրը կը դառնայ զիրար ուտելու՝ բղիտելու շուրջը՝ և գեւ ինչե՛ր . . .

Ա. Չ. Գ. Ա. Յ. Ի. Ն

ԵԿԻՊՏՈՍԻ ԱՌԱՋՆՈՐԴԸ

Վերջին պահուն հաւատուի աղբիւրէ կը տեղեկանանք թէ՛ տեղույս նորընտիր առաջնորդ Գեր Սյապէան Սըրբազան, առաջիկայ շաբթուան մէջ (չե՛նք գիտեր ս'ը օր) Գահիրէ պիտի հանուի:

Հաւատուի աղբիւրէ ըսինք. մաղթե՛ք որ, հակառակ մեր հաւատքին, այս անգամ ևս canard ի կերպարանք չաւելու այս ուրախառիթ լուրը:

Պատուարժան Վարչութիւն « Նոր Օր » ի,

Դիւանս կը փութայ հաղորդել թէ՛ Ընկերութեանս Գործադիր Ժողովը այսօր իր անդրանիկ նիստը ունեցած՝ և իր Դիւանը կազմակերպած Լ հետեւեալ կերպով՝

- Տիար Սեդրաք Օտապաշեան Ատենապետ
- » Վահրամ Ալապին Ատենապետ
- » Արտաշէս Յովսէփեան Գանձապահ
- » Տիգրան Կազաբեան Հաշուակալ
- » Յակոբ Բիւրքճեան Խորհրդակալ
- » Գրիգոր Աւագեան »
- » Խաչիկ Ալթունեան »

Լիայոյս ենք թէ Պատ. « Նոր Օր » ի միջոցաւ կը յայտնէք զայս ժողովրդեան ի գիտութիւն. ընդունեցէք մեր յարգանաց հաւատովն:

Ի զիմաց Ընդհանուր Ժողովոյ Լսարան Ընթերցատուն Ընկերութեան Ատենապետ, Ատենապետ, Յ. ՄԱՐԶՊԱՆԵԱՆ Հ. ՊԵՐՊԷՐԵԱՆ Գահիրէ, 7 Դեկտ. 1900

Ա. Չ. Գ.

Գահիրէի Աղբիւրին Գալտեան վարժարանի համար թուարանութեան ուսուցչի մը պէտք ըլլալուն, փափաքողը կրնան դիմել « Նոր-Օր » ի խմբագրատունը:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մենք արդէն առանձին յօդուածով մը Եւրոպական տէրութեանց Չինաստանի մէջ գործած անդ իւր ինքնակերպ երեւան հանեցինք, մէջ բերելով հոն պատերազմի գացող զինուորներու իրենց ծնողաց զրամ նամակներէն օրինակներ: Գերման կառավարութիւնը որուն զօրքերուն գործած վայրագութեանց վրայ կը ծանրանար ընդհանրապէս Մամուլը՝ արդիւած է այդ կարգի նամակներու հրատարակութիւնը, և եթէ երբէք հրատարակութիւնը ալ պէտքէ նախ գրաքննութեան ենթարկուին: Ըստ Եւրոպական լրագրողներուն, Վիլհելմ կայսրը հրամայել է որ քննութիւններ կատարուին գիտնալու համար թէ ո՞ր աստիճան ըստ այդ են այդ նամակներու մէջ յիշուած դէպքերը:

Գերմանիոյ Չինաստանի մէջ կատարած արշաւանքները իրեն 152,770,000 մարքի նոստած է: (Մէկ մարքը կարծէ մէկ ֆրանք 23 սանթիմ):

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Մինչև հիմա Բարիզու Թուրքիոյ դեսպանը կը կառավարէր Պրիսթէյի մէջ Թուրքիոյ վերաբերեալ գործերը: Գեկու 4 թուականու Պօլէն «Թան» թրջուած հեռագրի մը համաձայն «Լէսթըր» թղթատուրը Սուլթանին նամակ մը գրել է, որուն մէջ վախար յայտնում է թէ՛ ասիէ վերջ Պրիսթէյի մէջ մնայուն պաշտօնեայ մը կուզէ, ո՞չ թէ Բարիզու դեսպանը փոխանորդութիւն ընէ: Սուլթանը դժնայում պիտի ստայ այս փափաքին գործակատար մը անուանելով մինչև որ Լէսթըր թղթատուրը մէկը ցոյց տայ:

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

Կիրակի առաւօտ Աղեքսանդրիոյ Սէն-Սապա եկեղեցոյն մէջ Չարին սնորհութեան համար պատարագ մատուցեցաւ, ուր ներկայ են եղեր Պ. Իվանով՝ Ռուսական դեսպանը և գեսպանատան մարդիկը:

Գեկու 21 յուրբաթ օրը տեղւոյս Խտիվական թատրոնին մէջ, ընդ հրակողութեամբ Ն. Բ. Խտիվին, արարեցին լեզուով ներկայացում մը պիտի տրուի ի նպատակ Արար բարեգործական ընկերութեան:

«Նոր-Օր»ի մէջ ծանուցինք թէ Խտիվական թատրոնի վարչութիւնը մերժել է խմբագիրներու հոն ձրի մուտքը:

Այգ անօրինութիւնը՝ որուն գէտ սատարի բողոքեցին խմբագիրները՝ շնջուած ու իրենց յատկացուած երեսուն և հինգ Վօքսիները նուէն բաշխուած է:

Մուհսին Պէյ՝ Սուլթանը փաշայի քարտը դարձ մօտերս Եւրոպայի պաշտօնատեղին պիտի մեկնի: Սուլթանին և անոր փեսային հաշտութեան հա-

մար ըրած ջանքերը լուրջովն ի դերս ելան:

«Երկրորդ» իր եղիպոսի նահանգներու համար հաստատած քառասունակը 3 օրուան լընցուցած է:

«Երկրորդ» կառավարութիւնը տեղւոյս անգլիական բանակին Բասրէ-էլ-Նիլի մէջ հող մը առեւած է, ուր Սուտանի մէջ սպաննուած զինուորներու յիշատակին արձան մը պիտի կանգնուի:

Ռամադանէն անմիջապէս վերջը տեղւոյս երրորդ զօրագունգը Սուտան պիտի մեկնի, և հիմա Խարթում զբանուող 3-րդ զօրագունգն ալ Գահրէ պիտի վերադառնայ:

Ղապի Սուլթանը փաշային փեսան՝ Եէվթի բաշան տեղեւոյ օր Պոլիս մեկնած է:

Վ Գ Ր Ջ Ի Ն Լ Ո Ւ Ր

Լոնտոն 10 Գեկու:

«Թայմզ» թղթատուրը կը գրէ թէ Պ. Քրուկէր Չարին հեռագիր մ'ընդունած է, որուն մէջ Չարը ներողութիւն կը խնդրէ որ չ'պետի կրնայ իր հիւանդութեան պատճառաւ Թրանսվալի խնդրոյն միջամտել:

Ե Ա Գ Ո Ւ Պ Հ Ա Ն Ն Ա

Երկրորդ գալէսի վեր գուցէ 7-8 մարդ կախուած է Գահրէի մէջ, բայց ևս երկրորդ անգամ էր որ անցած շաբաթ առատօտ, ժամը 7ին, Պապ-էլ-Խարի հրատարակին «Տրագործի» մը կախուիլը տեսայ:

Իր արդար պատիժը կրողն էր խըպաի Եագուպ Հաննա անուն 23 ամեայ միջահասակ, թխապէ՛մ, վաղվաուն երիտասարդ մը, հարուստ ընտանիքի զաւակ:

Սա նախ Սուրբայի գեղեցիկ կին մը սիրելու դժբաղդութիւնը կ'ունենայ, ապա՝ անհանգիստ իր սիրային յարաբերութեանց մէջ անոր ամուսնոյն, Կիրիլի Ապտալանի ներկայութեան սյս տարւոյ Յունար ամայն 6ի գիշերը Եարա Տէպըր Տաշ, Քօպրի Ղամբաի մտերը կ'սպանէ զայն:

Ոճրին յաշարը օրը սիրելէն հետ, որ դաւակից է եղէր իրեն, կը պատրաստուի Սուտան փախել ներսի ճամբով, կիցէ նաև մտած պահուն, կը պատասի տեղացի ժամագործի մը, որուն իր ժամացոյցը նորոգել տուած ու զրամն վճարած չ'է հղեր: Մագն իր առնելիքը կը պահանջէ խտրութեան զաննա անխոհմար չ'ուղեր վճարել, ո՞ւ այդ պէս գէ՛ճն երկարով սատակացած, ոստիկանի մը միջամտութեամբ կողման արհաւանացը, որ արգէն դէպքն իմացուած, ու անհետացած կնոջ կողմին ու գիւնագիծերուն վրայ մանրամասն տեղեկութիւններ պատած էին: Փոտուած կիւր այդ ընդը սառեկալու համար ամենքը միտին կը գրկուին Գահրէ, անոր բռնակամ թագին ոստիկանատունը կիւն իրեն ամուսնոյն գիտել տեսնելով շրջված, կուրանայ անոր իրեն ամուսին ըլլալը:

Եագուպ Հաննա չ'ուզանար խտտութեան թէ ինք առանձին գործած էր այդ ոճիրը:

Ասոր վրայ Եագուպ Հաննա մահուան կը դատապարտուի, իսկ կիւր երեք ամիս բանտարկութենէ մը յետոյ ազատ կարձակուի:

Այս երկրորդ անգամ էր որ մարդու մը կախուիլը կը տեսնէի, ըսի. սակեցնեմ սակայն որ առջի անգամ տեսուած ալ, ասիէ՛ լու չ'եմ լընքը՝ 13 կամ 16 տարի առաջ, դարձեալ նոյն տեղն էր, նոյն հրատարակին մէջ, սա տարբերութեամբ որ դէպքի շարժառիթը կին չ'էր, այլ զրամ: Հողեղաւակ ներքինի մը, իր ներքինի տիրոջ հարստութեան տեղի չ'ուղ պահանջաւ համար խեղդարեւ թրած էր զանի ու մահուան դատապարտուած:

Ճանապարհէն վազն ի վազ հոն զինուղ ամբոխին յարուցած ժխորին ու աղմուկին մէջ, հանդարտ քալելով, կը հարցնէի իւրովի թէ նոյն տխուր տղապարթիկն ու պիտի ունենամ՝ այդ եօք այս անգամ ալ: Այն ատեն ևս ալ վաղելով կ'երթայի, ու երբ, կը խտտուանիմ, առտուան միջնային այդ հրատարակին վրայ հրամար կախաղանը կը նշմարէի հեռուէն, ամբողջ անդամներուս վրայ դոյ կուգոր: Եւ վերջապէս՝ այդ սրտաճմբկ տեսարանը կը սարսափեցնէր զիս:

Այս անգամ, սակայն, փոխուած էի բոլորովն, պաշարուն կեցած կախաղանին դիմաց, հետաքրքրութեամբ Եագուպ Բաննայի վերջին վայրկեաններուն սկանաւտես կ'ըլլայի:

Եագուպ Հաննա անվեհեր էր միշտ վար իջու մահապարտներուն տեսուած քէն, ընց իր մահուան վճարը, փափաք յայտնեց իր Խոսհակ եղբայր տեսնել, բայց սո ներկայ չ'էր հոն, ներառութիւն խնդրեց բանապահէն զինք նախատած ըլլալուն համար, չ'եմ գիտեր ինչ նպատակաւ վերջին վայրկեանին մահանախանութիւնն ընդունեց ու հաստատուն քոյրերով կախաղան բարձրացու, ու մահը կատարեց իր գործը:

Այս տեսակ մը նուիրական ժամուն որքան այցանեի էր սակայն հոն համարմարած այն հաղարատը բազմութեան վարժաւորը մինչ մահապարտութեան մէջ ըրածը կախաղանէն կ'սխ իր մեղքը կը քուէր, հրմըտիւմ ներք, քրքիւնք, լիբ ու լիբը ակնակրներ ընդհանուր էին սարկոյատակէ սարկոյատակ, կատքէ կատք ու պատուհանէ պատուհան, վտահ եմ որ դժբաղդ Եագուպ Հաննայի վրայ կ'արեկցութեան ակնապէ մը նետող չ'եղաւ երբէք. մեծ ու սղարիկ չար մարդ կ'ութեան արժանի, կատարելագործուած զաւակներ էին:

Իմ առանձին ուշադրութիւնս զըբաւեց յետոյ կախաղանը մեկնած պահու նկատեցի որ առաջուան խնճ ու կրակ կախաղանը չ'էր սյն, այլ շէնքով շնորհքով բան մը՝ քովս կեցող բարեկամ էֆէնտի մը հարցուցի և իմացայ որ հոն առաջին անգամ բարձրացող մեր Մուշեղն է եղեր, ին՝ զՍուշեղը, այն ատեններ ինեղ ու ինըրդ գործող

կատակցութեան մը մէկ գլուգղը չ'էր:

Ինչ և իցէ, գէթ բարձրացած կախաղանը՝ իր տածած դողափարիս պէս գեստար է եղեր, բսի ու հեռուցոյ խղճարով Եագուպ Հաննայի վրայ: * * *

Ա Կ Ո Ա Յ Ի Յ Ա Ի Ո Ւ Ն Յ Ո Ղ Ն Ե Ր Ո Ւ

Չրչոյ թէ ձեր սկոտան սափրիչներու վտահիք:

Վերջերս Պօլսոյ մէջ մէկը, որուն սկոտան սատարի կը ցուէր, քաշել տարու համար, սափրիչի մը կը գիմէ, որ սկոտան քաշելու ատեն, մարդուն կեանքն ալ հետը կը խլէ . . .

Սափրիչը սկոտայի ցաւով ստուարողին սկոտան չ'ընալով քաշել, ալիւնը առատօրէն կը հասի և մահը վայրկեանական կ'ըլլայ:

Ա Գ Դ

Կը ծախուի 8. 4. կը լընկայեանի խտուրը ի Եարա Ապու-Էլ-Աղիվ:

Օ Ր Ա Յ Ո Յ Ց

ՊԱՐՁ ԵՒ ԸՆԴԱՐՁԱԿ
1901 ՏԱՐԻՈՑ

ՍԵՂԱՍԱՆՈՒԹԻՆ

Ս. ՓՐԿԶԻ Ա.Ձ.Գ. ՀԻՒՆԱՆԱՆՈՅԻ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՏԱՐԵՑՈՅՑ

ՊԱՐՁ ԵՒ ԸՆԴԱՐՁԱԿ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԱՐԵՑՈՅՑ

ՊԱՏԿԵՐԱՋԱՐԻ

Երջակայ գիւղերէն եկած յանձնարարութիւնը փոթով կը կատարուին Գիմել վերոյիշեալ հասցէին:

Ա Գ Դ

Շատերու կողմէ յայտնուած փափաքի մը դժնայում՝ առլու և մեր ընթերցողներու գիւրտութիւն մը ընծայելու նպատակով, այսօր հետեւ մեր թերթը հատով պիտի ծախուի Եարա Ապու-Էլ-Աղիվի սկիզբը Պ. ԿՈՐԱՊԵՏ ԵՐՁՆԻԱՅԵԱՆԻ խոնարհ ինչպէս նաև Գլոխ-Պէյ վարչոյ ծայր և թըրամովէնի բու. կայարանին մօտ ծխազանու Պ. ՄԱՐՏԻՐՈՍ ԳԱՍԱՊԵԱՆԻ քով:

ԳԵՐՄԱՆԻՈՅ ԱՐԵՒԻՐԱԿԱՆ ՄՐՅՈՒՄԸ ԱՆԳԼԻՈՅ ԴԷՍ

Մնգիւր առևտրական ու սեղանաւորական օրութիւններէն, շաբաթաթերթներէն ու բազմաթիւ ամսական լուրջ հանդէսներէն անոնք՝ որոնք բռնուած չ'են ճիւղիկովի ախտէն,

1895—6էն ի վեր՝ և սակայն մասնաւորաբար այժմ՝ լեցուն են երկարահան տեղեկութիւններով և թիւերով, որոնք կը հաստատեն Գերմանիոյ կատաղի մրցման յաջողութիւնները Անգլիոյ արուեստագործութեան դէմ, ոչ միայն օտար և գաղթային հրապարակներու վրայ, այլ նոյն իսկ Անգլիոյ մէջ, Հակառակ այդ լուրջ ու բազմաթիւ յօդուածներուն, տակաւին ահագին թիւ մը կայ սակայն Անգլիոյ մէջ, գործատէրներու, վաճառականներու և առևտուրի զանազան դասակարգերու պատկանողներու որոնք կառչած կը մնան սա՛ ժառանգական և ինքնահաւան համոզման թէ Անգլիոյ Արուեստագործութիւնը անմրցելի է բացարձակապէս և թէ անոր աշխարհածաւալ վաճառականութիւնը չի կրնար յաղթուիլ բնաւ:

Օտարներու մրցման կատաղութեան ու արգելքին նկատմամբ Անգլիացիներու մեծագոյն մասին այս տգիտութիւնն ու անտարբերութիւնը արգիւնդներէն մէկն է այն ահռելի միջնակօրիցիներ որ ահագին համեմատութիւններ առած է Պօէրական պատերազմին սկզբնաւորութենէն ի վեր մանաւանդ, և որուն արծարծման շարունակ ուժ տալու վրայ են լոնտոնի և գաւառական կէս բէնիկոնց կարգ մը օրաթերթեր, որոնք իբրև թէ չեն պատկանիր ո՛ր և է կուսակցութեան և հետեւաբար զուրկ են սա՛ կամ նա ազդեցութիւններէ, և որոնց միակ նըպատակն է սակայն զրամ դիզելը կարելի և օրինաւորապէս ներելի ամէն միջոցներով, որուն է՛ն զլիսաւորն է անշուշտ ժողովրդին ահագին մեծամասնութեան սկիւր կողմերը ու հակումները գգուել:

Գերմանիա ոսկայն օգտուելով Անգլիացի արուեստագէտներու և վաճառականներու այս անտարբեր ու ինքնավստահ ընթացքին ու մանաւանդ իր ցեղին բնական ճարպիկութեան ու ճկունութեան ու գերակշիռ հանգամանքներէն, լուիկ մնչիկ շարունակ աշխատելու վրայ է ընդարձակելու իր արուեստագործութեան ամեն ճիւղերը, գրեթէ առանց բացառութեան և հետեւաբար իր վաճառականութիւնը՝ գրեթէ աշխարհիս չորս ծայրերը:

Այս պարագան կը հաստատեն ո՛չ միայն կարող ու լուրջ Անգլիացի գրիչներ, այլ նաև զանազան բազմաթիւ օտար հրապարակներէ Անգլիական հիպոթոսներու զրկած տեղեկագիրները, որոնց մէջ նշանակուած ամէն բանէ աւելի պերճախօս թուանշանները շարունակ կը հաստատեն գերման վաճառականութեան ծաւալումը մասնաւորապէս ի փաստ անգլիականին: Այդ տեղեկագիրներուն գրեթէ ընդհանուրին ցուցուցած պատճառները, ի մասին Անգլիոյ վաճառականութեան ունեցած ընկրկման Գերմանիոյ մրցման հանգէպ, հետեւեալներն են.

1. Անգլիացի վաճառականներու ըմբռնած չըլլալը թէ, Ա.—Ստորին և հետեւաբար աժան ապրանքներ

պէտք է արտադրել: Բ.—Գոհ ըլլալ նախ փոքր քանակներ ներկայացնող հրամաններով: Գ.—Ուսումնասիրել յաճախորդներու փափաքները և ճաշակները: Դ.—Մեթրական գրութիւնը ընդունիլ հաշիւներու և չափերու մէջ: Ե.—Վարկի դիւրութիւններ ընծայել:

2. Անգլիացի ճամբորդող վաճառականներու պակասութիւնը բարդատմամբ օտարներուն, և անոնց սրգիտութեանը այն երկիրներու լեզուներուն, ուր կը ճամբորդեն և իրենց ապրանքներու գիններուն ցուցակներուն միմիայն անգլիերէն լեզուով գրուած ըլլալը:

3. Գերմանացիներուն ապրանք հակելու, ծրարելու և այն արուեստի մէջ ունեցած գերազանցութիւնը Անգլիացիներուն վրայ:

4. Անգլիական շոգենաւերուն նաւողչէրին սղութիւնը բազդատմամբ գերմանականներուն, որով բնականաբար փոխադրութեան ծախքի առեւելութիւն մը առաջ կու գայ անգլիական ապրանքներու վրայ:

5. Գործադուլներու յաճախ երևան գալը Անգլիոյ մէջ, որով հրամաններու յանձնումը անկանոնութեանց կը մատնուի:

6. Գերմանիոյ մէջ մասնագիտական ուսմանց անհամեմատ զարգացումը, որուն վրայ պէտք է աւելցընել երիտասարդ Գերմաններու աշխարհի չորս կողմերը շարունակ ճամբորդելը, նպատակ ունենալով գործնականապէս սորվիլ օտար լեզուներ, իւրացնել առևտրական գանազան սովորոյթներ, և այլն, որով անշուշտ ճարպիկ գործիքներ կը դառնան գերման վաճառականութեան ընդարձակման:

(Շարունակելի)

Le Gérant J. MUNIER

Տպա. «Միութիւն».— Թ. Ս. Փափագեանի

ՊԱՆԳ ԼԻՕՆԷԶ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԿԱԼ ԵԳԻՊՏՈՍԻ Մ. ՍՕՍՕՅԵԱՆ

Լիոնի հանրածանօթ գրամատունը, այս անգամ ունեցաւ իւր Եգիպտոսի գործակալնալ, Տ. Մկրտիչ Սօսոյեան, որ իւր հրապարակային ցոյց տուած պարկեշտ գործունէութեամբն ամենուս վստահութիւնը կը վայելէ:

Սոյն գործակալութիւնը, 11 Սեպտ. թիւ իրեն յանձնուած և Լիոնի բազաքապետութենէն պաշտօնապէս վաւերացուած փոխանորդագրի համաձայն, պիտի կատարէ Պանգ Լիոնէզի միջոցաւ ամեն տեսակ գրամական և Քուէտի Ֆօնսիլիէի, վիլ տը Բարիի և Գաղղիական ամէն արժեթուղթերու գործողութիւններ, գանձումներ: Սմական չնչին գումարի մը խնայողութեամբ ձեռք կը բերուի քիչ ատենէն, պտհաստի բաժնեթուղթ մը, վիճակահանութեամբ երաշխաւորուած:

Փափաքողները հաճին դիմել Նիւպոի վրայ փաստաբան Ռաբթաքիի գրասենեակը:

Թղթակցութիւն և կամ գրամ զըրկել հետեւեալ հասցէին:

Մ. ՍՕՍՕՅԵԱՆ
Ի ԳԱՀԻՐԷ

ԱՏԱՄԱՐՈՅԺ Պ. ՆԻԿՈՂԻՄՈՍ

Վերջերս հաստատուած ի Գահիրէ, Գաֆէ տը լա Պուրսի կից, Բ. յարկ, թիւ 9 դասիկոնը:

Կը բժշկէ բերնի և ակուսի ամեն տեսակ հիւանդութիւնները: Ազբատները ձրի կը դարմանէ ամեն օր, առաւօտեան ժամը 8էն 9:

ՊԵԼԱՅԱՆ-ԹԻՃՄԱՆԵԱՆ ԸՆԿ.

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԴԵՐՁԱԿՆԵՐ

ԱՐԱՆՑ ԵՒ ՏԵԿՆԱՆՑ

ԵՒ ՁԵՆԱԿԻՏՈՒԹԵԱՆ ԴՊՐՈՑ

Ապսիմի մեծ պողոտային վրայ Տայիւայի Սանիթի դիմացը, Գախիկն ելեկտրակոն գործիքներու վաճառատունը:

Վերջերս Ամերիկայէն հօս եկած հաստատուած ըլլալով կը յայտարարենք արգոյ հասարակութեան թէ՛ պատրաստ ենք գոհացնել մեզ գիմոյ Պատ. յաճախորդները, գործի մարութեան, գիներու չափաւորութեան և ճշգրտապահութեան կողմէն:

Մեր գործատեղոյն մէջ կ'աւանդուին նաև ձեռագիտութեան դասեր ամերիկեան ամենավերջին կատարելագործուած մէթոտով,

Մանրամասնութեանց համար գիմել մեր գործատեղին:

ՃԱՅԱՐԱՆ ՀԱՅՎԱԿԱՆ

ՄԻՀՐԱՆ ԵՒ ԵՂԲ. ԳԱԶԱՆՃԵԱՆ

Շարա Ապու-Սապահ

Նիսու-Տնիվեքսի յիզարանին դիմացը.

Օգտաւն ու զուարճալի գիւրք մաքուր ու վայելելի սպաս. համեղ ու մնդարար կերակուրներու զանազանութիւնն, անխարդախ պատրաստութիւն. ճիս ճաշացուցակ մը դիւրամատչելի գիներով. ահա՛ Գազանճեան եղբարց ճաշարանը:

Ով՛ որ կ'ուզէ, փորձի համար մէկ անգամ թող գիմէ, վստահ պէտք է ըլլայ թէ մշտակայ յաճախորդը պիտի դառնայ հայկական ճաշարանին:

Տ Պ Ա Ր Ա Ն

Ի ԳԱՀԻՐԷ

Ա.ՊՏԻՆ ՓՈՂՈՑ, ՍՈՒԳԱԹԹԱՄԻ ՃԻՇԴ ԴԻՄԱՑ

ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ

ԹՈՐԳՈՄ Ս. ՓԱՓԱԶԵԱՆ

Սոյն նորակազմ տարանին մէջ կը տպուին հայերէն ու եւրոպական լեզուաւ ամեն տեսակ հրատարակութիւններ, պարբերական թերթեր, յայտարարութիւններ, շրջաբերականներ, այցիտոմներ, մահազգեր, հարսանեաց հրաւիրագրեր, կանոնագիրներ, նամակագրութիւններ, պահարաններ, հաշուեցուցակներ են:

Յանձնարարութիւնները կը կատարուին փութով, ամենայն խնամով եւ ճշգրտաբար սպագրութեամբ:

ՉԱՓԱԻՈՐ ԳԻՆԵՐՈՎ